

H. PALAKACHIAN, Directeur - Rédacteur
de la Revue Hebdomad. „MÉGHOU“,
171, Rue Kabristan, Péra, CONSTANT/PLE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա՝ տարեկան 250, վեցամսեայ 125 դր.
Եւրոպա՝ — 60 ֆրանք.
Ամերիկա՝ — 3 Զօլար.

مشرق

صاحب و مدیر مسئولی هووانان پالاقاشیان

استانبول بک اوغلی قبرستان سوقاق تومرو ۱۸۱

Ursoliansk, Isfahanskye ul. Miasnaya. Sforhik

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԻԱՆ

Կ.ՊՈԼԻՍ, Իկես, Գապ: խաւսի փողոց, քի 171

Ա. ՏԱՐԻ

Թիւ 4

— — —

1927

ՅՈՒՆԻՍ 23

Հասը 5 դրու.



ԴԱՆՈՒՅՈՒՄ

Տար 10 դրու.

Չսպասած գրու-
թիւնի ցեղի վերա-
դարձումը:

— — —

Հասը 5 դրու.

Կը հրատարակուի ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը

« ՄԵՂՈՒ » ի աշտարակն Թուով կը սկսինք հրատարակել

ԱՆՄԱՀՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՄԱՅԻ ՏԻԵԶԵՐԱՀՈՉԱԿ

ԵՐԵՔ ՀՐԱՅԱՆԱԿԻՐՆԵՐ

Ընթիւ վեպը իր Թերթին, 8 էջնոց պրակներու մետով:

ԵՐԶԱՆԻԿ ԹԱՂ ՄԸ

Ֆերի-գիւղէն իրազէկ քաղեցի մը կը գրէ մեզ.

« Կը լսենք թէ, հրաժարեալ Քաղ. Ժողովը՝ իր Նախագահին վկայութեանը վրայ համադրած գոյացնելով որ Ֆերիգիւղի Ս. Վարդանանց եկեղեցւոյն քահանաներն եւ սպասարաններն ինքնաբաւ եւ քաջազարթ են թաղին մատակարարական գործը վարելու մէջ, Առժամ. Թաղ. Խորհրդոյ կողմով թաղին փութացնելու պէտք չէ տեսնուի:

« Արդարեւ, չորհրդարանի եւ Ֆերիգիւղի եկեղեցւոյն պաշտօնէութիւնը որ կը յաւանդուի մէկ ու կէս ամիսէ ի վեր ինքնաբաւ մատակարարելու եկեղեցին անշուշտ, առանց որ եւ կ'զգոնուի անոր անհաշիւ, ինչ որ կրնայ ուրիշ թաղերու նախանձը դրոշմել: Այս փայլուն յաջողութեան մէջ կարեւոր գեր մ'ունին անշուշտ պատուակալ Քարողիչ Արքեպիսկոպոսն եւ Աւագերէց Տ. Զարեայր քահանան, իրենց աջակց ու նենայտով ժամկոչ Սերովիչ աղբարը, որ Թաղ. Խորհուրդի հրաժարումէն անմիջապէս յետոյ՝ եկեղեցւոյ համար բլրալէք գնումներուն (ձէթ, մս, հալլա) փափուկ գործն ստանձնած է ամենայն անձնուիրութեամբ:

« Կ'ըսուի թէ յառաջիկայ թաղային բնորոշութեանց առթիւ թաղեցիք մտադիր են իրենց քուէները կեդրոնացնել ժամկոչ աղբար վրայ, ի վարձ անոր այս անձնուէր ծառայութեան:

« Փոխան պրակիի գանձումներն ալ մեծ փութով առաջ կը տարուին, հուրաւաւունքուն տունները ըստ օրինի ներկայացուելով՝ ստացարկներ, որոնք ո'չ Թաղ. Խորհրդոյ կ'ընդ կը կրեն եւ ո'չ ալ Գանձապետի եւ Համարակալի ստորագրութիւններն, անշուշտ միւսին խնայողութեան համար, յօդուտ եւ ի պայծառութիւն Սր. եկեղեցւոյ. Ամէն: »

Երջանի՛կ քաղ մը արդարեւ սա Ֆերիգիւղը: Ինքն իրեն կը կառաւարդի, առանց Թաղ. Խորհուրդի: Ո՞վ կ'ըսէ թէ մեր եկեղեցիներն ու դպրոցները ստանց Թաղ. Խորհուրդի չեն կրնար կառավարուիլ: Ապացոյց, անա՛ Ֆերիգիւղը: Հոն կայ արցաւ Տեղապանը, անգահախոյի Տէր

ԳՐԱԿԱՆ ՆԻԿԹԵՐ

ԶԱՅՆԸ

Թէ ձայնը չըլլար բնութեան մէջ, կամ, որ հոգին է մեզ համար, մարդն օժտուած չըլլար լսելու կարողութեամբ, խաղութեան զգայարանքը սփռուէր իրեն, ո՛րքան ամէն ինչ պիտի փախուէր իրեն համար:

Լուռ տնայութիւն մը պիտի ըլլար աշխարհ: Կենդանութեան ի՞նչ մեծ նշան մը, էից հաղորդակցութեան ի՞նչ մեծ միջոց մը պիտի պակսէր բնութենէն: Հոգեբուն առկա լուռ տառաւոր անտառ ու փութորից ծովը պիտի արտայայտէին միւսնոցն կեանքը, ու տիեզերական կեանքի մը հետ իրենց հաղորդութիւնը: Իբրեւ կեանքի արտայայտիչ՝ անշուշտ շատ մեծ նշանակութիւն ունի ձայնը, որ մեզ համար լինելով մտածման ու զգացման լայնատեղութիւն՝ կը գրդէ մեզ խորհուրդով ու զգայնութեամբ սղեւորել անշուշտ իրերն ալ որք մեր ակունքին համար ձայն մ'ունին: Ու անո՛ւ մեր հոգին, այդ ձայներուն, մոնէլաններուն, մրմունջներուն, թնդմանց ու հծծիւններուն հանդէպ, իրեն նման հոգիներու զայրոյթը, վիշտը, սէրը, տենչը կը կարծէ լսել իր շուրջը. բնութեան էից ու երևոյթից մէջ: Ու այդ մեծ աղբիւրն է՝ բանաստեղծութեան, բնութեան մեր հոգւոյն վրայ բրած խոր ու յանկուցիչ ապաւորութեան մեծ պատճառը: Ծովիզեր աւազին վրայ արծաթ սփռը սիրոյ յանկիւղ մը կը ճուրջայ. տերեւներուն մէջ հովը կ'սղբայ տխուր կամ կ'երգէ զուարթ օրօրուելով. խոտերուն տակէն մրմնջածայն սողոսկող առուակը բան մը կը շշնջէ. ամայր սպառնալից կը գոռայ, ու փութորիկը, անզուսպ զօրութիւն մը, իր ընդարձակ ասպարէ-

Հայրմայր Հայրը եւ հաւասարիմ ժամկոչ ախպարը: Չե՞նք բաւեր ասոնի: Հարկաւ ամէն թաղի մէջ կը գտնուին այս տեսակէ մէկ մէկ տիպարներ: Իննչո՞ւ անոնց չը յանձնուին գործերը, եւ Թաղ. Խորհուրդը ընտրելու ձանձուրայքը տան թաղեցիներուն: Ի՞նչ գէշ դրութիւն: Բայց բոլորն կ'ասակը եւ դառնանք իրականութեան:

ՄԵՂՈՒԻ վերջին թուով պարզած էինք արդէն Ֆէրիզիդի Ս. Վարդանանց եկեղեցիին անտէր անտիւրակաւ տնտեսական վիճակը: Մէկ ու կէս ամիսէ ի վեր Թաղ. Խորհուրդը չը կայ, եւ Տեղապահ ու Քաղ. Ժողովը չեն կազմեր Առժամանակեայ Խորհուրդ մը, որպէս զի սա ալ ընտրող. Ժողովը կազմելով՝ նոր Թաղ. Խորհուրդը ընտրել տայ: Ինչպէս դիտել տուինք արդէն, Թաղ. Խորհուրդը չընտրուելով՝ ընտրող. Ժողովը չը կազմուի եւ ընդհ. Ժողովը ետէք անգամներն ալ չեն ընտրուիր: Ասոր ալ հետեւանք այն պիտի ըլլայ որ յառաջիկայ Պատրիարքական ընտրութեան մէջ 2000 տուն Հայու-թիւն պարունակող Ֆէրիզիդ-Նեան թաւ-Շիւրի-Վէրիւն Բանկալի-Սինէմէ-է-Յոյ ընդարձակ թաղը իր մասնակցութիւնը չպիտի կրնայ բերել նոյն ընտրութեան մէջ: Կը հարցնենք թէ, ի՞նչ իրաւամբ այս կարեւոր թաղը կը զրկուի Պատրիարքի ընտրութեան մէջ իր ձայնն ունենալու իրաւունքէն: Ընդհ. Ժողովը անդամոց մէջ անուշտ կան իրենց պաշտօնին գիտակից արտայայտմանը: Կը սպասենք որ անոնք ձայն բարձրացնեն Ժողովը յառաջիկայ նստին մէջ, պատասխանատուութեան ներքեւ առնեն Տեղապահն ու Քաղ. Ժողովը, հարցնելով անոնց թէ ի՞նչ պատճառաւ Ֆէրիզիդի մէջ ընտրութիւնները տեղի չեն ունենար եւ թաղը կը զրկուի իր անկապտելի իշխումէն ի գործ դնելէ: Ֆէրիզիդի իրաւունքն ալ կ'ուզեն ըսելու յառաջիկային թէ՛ «մենք չենք հանձնար ընտրուած Պատրիարքը, քանի որ պակասաւոր է ընտրութիւնը, ինքը մասնակցած չըլլալով ընտրութեան:»

Շատ զարմացանք եւ ցաւեցանք, երբ տեղեկացանք որ Ընդհ. Ժողովը մէջ գտնուելու են անդամներ, որոնք Քաղ. Ժողովը ընտրութեան համար, առանց խղճահարութեան փութ տուել են Ֆէրիզիդիցիներու բացարձակ իրաւունքն ապօրէն կերպով կապտող հրաժարեալ Քաղ. Ժողովը անդամներուն: Ըսել է՝ այս տեսակ ապօրինութիւններն յաւերժացնել ուզող անդամներ ալ կան Ընդհ. Ժողովը մէջ: Շիտակը, պաշտօնի գիտակցութեան աղէ՛կ ըմբռնում:

զին մէջ իր անհղ խաղերուն հանդիսատես կը հրաւիրէ զաշխարհ:

Թո՛ղ յանկարծ դադրէին կենդանեաց բիւր ձայները լսելի ըլլալէ. վազբերու եւ առիւծներու անաղղկեցիկ մոնչիւններուն ու գոչիւններուն հետ, — ու անոնք ալ ունին իրենց գեղեցկութիւնը իբրեւ ուժին ու կեանքին բացատրութիւնը —, ինչպէս օդը լեցնող ամէն բազմաբնակ ու չիւններուն հետ, պիտի լռէին կովերու բառաչն ու ոչխարաց մայիւնը, եւ թռչնոց ճողողիւնը, ու բլրոյն վրայ արածող խաչանց հօտը, անձայն, պիտի կորսնցնէր իր աղբաժ հրապոյրին մեծ մասն ու, ամառնային գիշերներուն, իրենց երգչին գեղեցկաւորէն զուրկ մնացած անտառք իրենց քուրմը կորուսող խորհրդաղիւրի տաճարներ պիտի թուէին:

Ու երեւակայնէ՛ք մարդիկն անխօս անարարաւ հանդէպ իրարու, անշուշտ ընտրութեան գրկին մէջ: Պիտի ըլլա՞ր նախ ինչ որ է այսօր, լսողութեամբ դաստիարակուած, խօսքով ու երգով մեծցած,


իր շուրջ իր նմանեաց — ու համայն էից — լեզուն խմբող ու իր լեզուով անոնց հետ հաղորդակից: Համը, անլեզու ու մշտախուլ, ապուշ մը կերպարանքը պիտի ունենար, իր միտքն արդէն տարրական սողմնային վիճակի մէջ մնացած, զի գիտենք թէ՛ ո՛րքան բանականութիւնը կը պարտի լեզուին, ու ձայնական յօդաւոր բարրան է գերազանց լեզուն, թո՛ղ որ մեր ենթադրութեան մէջ մարդիկ պիտար հասկնալու համար բնական ազգականներու լեզուն ալ չպիտի ունենային, միայն ձեւերու, շարժմանց ու գիմնային թերթմաներու արտայայտական միջոցներուն մէջ սահմանափակ: Իրենց իմացականութիւնը, իրենց զգայնութիւնը վայրենեաց խորհելու եւ զգալու աստիճանէն ստորին պիտի ըլլար: Ո՛րքան անտառանգեալ ու թշուառ կ'երեւին մեզ խուլ-համրերը, եւ սակայն անոնցմէ անհամեմատ աւելի տխուր պիտի ըլլար մարդկութեան վիճակը, եթէ բոլորովին բաղկանար այն՝ խուլ-համր էակներէ:

Խօսող-լսող մարդիկ այսօր քաղաքակրթութիւն մը ստեղծած են յորմէ եւ խուլ-համրերը կ'օգտուին առատօրէն, ու նոյն խակ այս վերջիններուն զօրախտութիւնը մեղմացնելու յատուկ միջոցներ հնարած են:

Իսկ խուլ-համր մարդկութիւնը այդ տիպիանքներէն ալ զուրկ պիտի ըլլար: Պիտի չճանչնայինք հէ.ք մարդկութիւնը, բացարձակ անխօսութեան ու անձայնութեան վիճակին մէջ, լսելու ի մէջ խուլութեան: Ընկերութեան, խօսակցութեան, դաստիարակութեան, բարեկամութեան հաճոյքներն ու օգտակարութիւնը գոյուլութիւն չպիտի ունենային կամ աննշան փոքրապունի մը պիտի վերածուէին: Գաղափարներու հաղորդակցութիւնը չպիտի սնուցանէր ու կենդանացնէր մտքերը, ծերին ու իմաստունին հրահանգիչ ձայները չպիտի առաջնորդէին նորերն ու անփորձները կեանքի ձեւաբուն մէջ, եւ սէրը պիտի կորսնցնէր իր ամէնէն կենդանի, հաղորդիչ միջոցն արտայայտութեան, չլրնալով հոգւոյն խորէն բղխեցրնել ու իր առարկային հոգւոյն խորոց մէջ թափանցեցնել այն սղու բառերը, հրեղէն բացատրութիւնները, խանդավառ երգերը, որովք ամէն սիրող էակներ, հայր, մայր, ամուսին, քոյր, եղբայր, ու ամէն սիրականք իրենց զորով ու խանդալատանքը կը նուիրեն իրարու, — սէրն ինքնին արդէն սիրոյն բարբառով կը թուելով, աղնուանալով, բարձրանալով: Ե՛րբ բացակայ աշխարհէն, երաժշտութիւնը անհոյ, ինքնին աշխարհ մ'անձանօթ մնացած, անհուն աշխարհ մը մեղեդեաց ու դաշնակութեանց, որոց ի լուր նաեւ ինչ գիւթական շար մը երազներու ու խաղանքներու աշխարհաց կը սլարէ մեր հոգւոյն առջեւ ու կը դիւթէ, կը յափշտակէ, կ'առտուածացնէ զմեզ . . . :

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Անցիպ գրուածքներէն)




ՓԱՐՈՍ ՄԸ ԷՏՆԱՅԻ ՎՐԱՅ

Ի մօտոյ էտնայի գաղաթը պիտի կառուցուի մէկ միլիոն մօմի ուժով հակափարոս մը, որ շողեւաններու չպիտի ծառայէ միայն, այլ մասնաւոր Միջերկրականէն անցնող օդայնաց ուղեւորներու:

Հաշիւ եղած է որ, ծովուն երեսէն 3000 մէթր բարձրութեան մը վրայ դըրուած՝ այսչափ արտակարգ կերպով լուսարձակ փարոս մը պիտի կրնայ տեսնուիլ օդայնացիներէ, Միջերկրականի որ եւ է մէկ կէտէն:

Այս ձեռնարկին համար անհրաժեշտ եղած երկրորդականութեան հարկու ուժն ստանալու համար, հարկ պիտի ըլլայ գործածել զանազան միջոցներ, ի մէջ այլոց, հովին ուժը որ իր շնչով շարունակաբար կը շրջապատէ Սիկիւեան մեծ հրաբուխը:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ



ՃԱՂԱՏՈՒԹԻՒՆ

Ճաղատութեան խնդիրն աւելի այրե-
րը կը շահաքրքրէ քան կիները, որովհե-
տեւ ճաղատ կանայք հազուադէպ են:

Հեղինակին մէկը, ճաղատներուն վը-
րայ խօսելով, ըսած է. « Ամօթ ներքի-
նացած հօտին, անդալար դաշտին, ան-
տերեւ անտառին, անմազ զլուխին »:

Արդարեւ, մազը փափուկ և միտաք-
սանման գեղմն է մանկան, արքայական
աղաթօշն է կնոջ, դիւթական և պատ-
կանելի սրակ մ'է ծերունիին համար:

Ահա՛ թէ ինչո՞ւ հոմար հերաթափու-
թիւնը տհաճութիւն կը սլատառէ ենթա-
կային:

Ճաղատութիւնը յառաջ բերողն է ճար-
պահոսումն (séborrhée) ըսուած մորթի
հիւանդութիւն մը, ճարպոտ կամ չոր,
թեփոտ կամ անթեփ, հիւանդութիւն որ
արդիւնք է՝ ըլլայ աւշայտութեան, ըլլայ
յօգախտականութեան:

Աւշայտներ ճարպահոսում կ'ունենան
արբուէքի ժամանակ. անոնք այս առ-
թիւ կրնան կատարեալ ճաղատներ ըլլալ՝
հազիւ քսան և հինգ տարեկան: Յօգախ-
տաւորներ դիւրաւ ճաղատ կ'ըլլան, բայց
իրենք զիրենք կը մխիթարեն, անխուսա-
փելի նկատելով այս վիճակը: Ասոնք լաւ
կ'ընեն հրաժարելով չափազանց կերու-
խումէ, մանաւանդ ողելից ըմպելիներէ
և մսերէ:

Երբ ճաղատութիւնը կը սկսի, պէտք
է յաճախ լուալ մազերը. որով մականոր-
թային բրդուքները կ'անհետանան և մոր-
թին քրքրուելուն տեղի չը մնար: Կարելի
է նաեւ օգտակարապէս գործածել հաւկի-
թին զեղնուկը՝ զարնուած վիճակի մէջ:
Ժանտախտէ փախչելու պէս պէտք է հե-
ռու մնալ ալքօլական շիւռմներէ, որոնք
կը չորցնեն մազերը և հերաթափութիւնը
կը փութայնեն:

Պէտք է նաեւ ուժով խողանակել մա-
զերը, որպէս զի մորթը չը քերթուի եւ
չը քրքրուի, և մանրէներ չը մանեն մէջը:
Խողանակը պէտք է կակուղ ըլլայ, և ո՛չ
թէ կարծր ու խայթող:

Երբ մազերը չոր են, պէտք է գոր-
ծածել լարծող նիւթ մը, խայծղանաճար-
պի (paraffine) իւղը, օրինակի համար,
կամ նուշի թարմ իւղը. այս վերջնոյն
կ'աւելցնեն քիչ մը խիթածառի (euca-
lyptus) իւղ, որ կ'արգիլէ անոր ծթելը,
և շատ քիչ ռեսորսին (résorcine)
(1 առ 100) որ պիտի պահպանէ մորթին
փափկութիւնը և փայլը:

Մէկ քանի սովորութիւններ կը նպաս-
տեն ճաղատութեան: Անթափանցիկ զըլ-
խարկ մը, տաքութիւնը մթերելով, հե-

րաթափութեան կը նպաստեն: Կակուղ
զլխարկի մը ներքին ջերմութիւնը, Յու-
լիս ամսուան մէջ արեւուն տակ պտոյտէ
մը յետոյ, 40-42 էն նուազ չէ: Քրտինքը,
յօգախտականներու քով խիստ թիւ, չի
կրնար չողխանալ և կ'ազդէ ինչպէս հե-
ղուկ թթուներն (acide), որոնց մէջ ի-
րենց բազուկները կ'ընկղմեն կարգ մը
գործաւորներ. ասոնք կը կորսնցնեն ի-
րենց բազուկներուն մազերը և կ'ըլլան
լերկ:

Բանակներու մէջ, սաղաւարտ կրող
զինուորները դիւրաւ կը կորսնցնեն իրենց
մազերը: Մազերը խիստ կարճ կտրելն ալ
ճաղատութեան պատճառ է. զլխու մոր-
թին արտադրած ճարպը չօգտագործուի
և թեփ կը սրտայնէ: Կիները, որոնց մա-
զը բաւական երկայն է միշտ, և իրենց
մազերը շատ կարճ չը կտրող այրերը,
շատ քիչ անգամ ճաղատութեան կ'են-
թարկուին:

Երկարատեւ հիւանդութիւնք կ'ազդեն
մազերու կենսունակութեանը վրայ, այն-
պէս որ աղպախտաւորներ (tuberculeux),
կանաչախտայիններ (chlorotiques) և ախ-
տաժէտներ ենթակայ են իրենց մազերն
դիւրաւ կորսնցնելու:

Մազերը չը կորսնցնելու համար, պէտք
է ընդհանուր կերպով գոհացուցիչ վիճակ
մը ունենալ, յարատեւ կերպով ուշադիր
և հոգածու ըլլալ ատղջութեան, և միշտ
յիշել մանաւանդ որ մազերը պէտք ունին
օդառութեան: Պէտք է յաճախ լուալ եւ
մաքուր պահել զանոնք:

3.



Ի՞ՆՉ ԲԱՆԻ ՄԷՋ ԿԸ ԴՏՆԷՔ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

« Մեղու » ի այս հարցումին, ստացած
ենք նաեւ հետեւեալ պատասխանները.

Տգէտ կին մ'եմ. բայց ասիկայ չար-
գիլեր ինձ խորհելու թէ, երջանկութիւնը
ոսկի ունենալուն և անով ձեռք բերուած
վայելքներուն մէջ չէ: Խեղճ մայր մը կը
ճանչնամ, որուն դրամը չէ որ կը պակսի,
և որ իր բոլոր զաւակներուն մահը տե-
սած է: Կրնամ երբեք երջանիկ ըլլալ ան:
Երջանկութիւնը կը կարծեմ թէ կատար-
ուած պարտականութեան մէջ է: Երբ ե-
րեկոյին, պառկելու ատեն, հանգստանա-
լէ առաջ, կրնանք ըսել. « Այսօր չարիք
չը գործեցի, ո՛չ ոքի նեղութիւն տուի
կամ վիշտ պատճառեցի, հաճոյ յեղայ Աս-
տուծոյ », անա՛ երջանկութիւնը:

ԳԵՂՈՒՀԻ

*

**

Ան որ քիչով գոհանալ գիտէ, երջա-
նիկ է՝ եթէ առողջ է, բնտանեկան լա-
ւազոյն բոյն մը կազմած է, և իր զաւակ-
ները կը կրթէ կը մեծցնէ լուրջ սկզբունք-
ներու և ո՛չ թէ այս օրուան հետեւակու-
թեանց մէջ:

ՄԱՅՐ ՄԸ

ԱՆՍԱՆՈՒ ՄՆԱՅԱԾ ՊԶՏԻԿ ԱՐՀԵՍՏՆԵՐ



ՇՈՒՆԵՐՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆ ՀԱՆՈՂ ՊԱՇՏՈՆԵԱՅՆ

Այսպիսի արհեստ մ'ալ կայ Պրանսայի
մէջ:

Կ'ուզէ՞ք դրամ շահիլ, ի գործ դնելով
արհեստ մը՝ գրեթէ պաշտօնական, և որ
սակայն ո՛չ յողնեցուցիչ է և ո՛չ ալ
դժուար:

Հաջել սովորեցէ՛ք. ջանացէ՛ք զանա-
զան ցեղերէ շուներու հաջիւնը նմանցնել,
և երբ բաւական վարժուիք, խնդրալիր
մը ներկայացուցէ՛ք Տուրքերու վարչու-
թեան, ըսելով թէ հրաշալի կերպով հա-
ջիլ գիտէք, և սպասեցէ՛ք: Քանի մ' օր
յետոյ պիտի կանչուիք բարձրաստիճան
պաշտօնատարի մ'առջեւ, որ ձեր հաջիւն-
ները խիստ քննութեան մը պիտի անցնէ:

Եթէ ձեր քննութիւնը յաջող անցաւ
և ընդունուեցաք, իսկոյն պիտի անուա-
նուիք « շուներ երեւան հանող պաշտօն-
եայ », և գործի պիտի ձեռնարկէք: Ձեր
ամսականը պիտի վճարուի եւմտական նա-
խարարութեան գաղտնի ծախքերու պիւտ-
ձէէն, վասն զի տակաւին համարձակու-
թիւն չկայ այս նոր տեսակի պաշտօնեա-
ներու գոյութիւնը հրապարակելու, եւ
անոնք կը գործեն գաղտնաբեր:

Բայց ի՞նչ է այս մարդուն պաշտօնը:
Շատ պարզ բան մը: Գիշերը պիտի պտը-
տիք Բարիզի փողոցներուն մէջ, իւրա-
քանչիւր դրան առջեւ պիտի կենաք և պի-
տի հաջէք. եթէ տանը մէջ շուն մը կայ,
ապահով եղիր որ պիտի պատասխանէ:
Այն ատեն գրպանի տետրակդ կը հանես
և տանը թիւը կ'արձանագրես: Յաջորդ
օրը յատուկ պաշտօնեայ մը կուգայ ստու-
գելու թէ շունը իր տուրքը վճարած է.
հակառակ սարապային՝ իրողութիւնը կը
տեղեկագրէ:

Գ Ա Ր Ո Ւ Ն



Ձմեռը դաժան նեղեց վերաբերու
Քամիի, ցուրտի, անձրեւի ամուկ,
եւ առաւ վրան զարգարսնքը պերճ՝
Շողջողուն, պայծառ, սիրուն արեւուն:

Ձկայ անասուն եւ ո՛չ ալ թռչուն
Որ իր իսկ լեզուով չերգէ՝ չի կանչէ.
Ձմեռը դաժան նեղեց վերաբերու
Քամիի, ցուրտի, անձրեւի ամուկ:

Գետակ սրնքաց, աղբիւր, առուակներ
Հեռու կը բեցն՝ սիրուն կերպերով՝
Արժաքեայ փայլուն շող շող կաքիմեր.
Ամեն ինչ պննի նորոգ հագուստով:
Ձմեռը դաժան նեղեց վերաբերու:

Յ. Գ. Փ.

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԶԵՂՏՈՒՄԵՐՈՒ ՇԱՐՔԸ

Օր նոր, յայտնաբերված նոր :

Յաւով կը տեսնենք որ մեր արդի նորահաս երիտասարդութիւնը բնաւ կարեւորութիւն չընծայեր լեզուին ուղղագրութեան : Պիտի բռնէ թէ ուսման թերութիւնն է պատճառը, բայց ես ալ պիտի բռնմ թէ անհոգութիւնն է :

Կը դառնում Պոլսոյ թաղերէն մէկուն մէջ ուր 50-60 հոգիէ բաղկացած մասնախումբ մը կայ՝ որ գրեթէ մեծամասնութեամբ կը բաղկանայ իւրենց թաղին նախակրթարանը աւարտած կամ բարձրագոյն կարգերը տեսած երիտասարդներէ : և սակայն ուղղագրութեան մասին անհոգութիւնը շատ պակշտ է իրենց մէջ : Աստիճառներն իրենց վարչական խորհուրդը, որոնց անդամներն աշխոյժ, և հակաճառութեան մէջ վարպետ, յաճախ յաղթական կը հանդիսանան իրենց ճիշտ և դարձգարծիկ լեզուով : Բայց երբ կարգը գրելու կուգայ, իւրենց տկարութիւնը երեւան կ'երևնայ : Եւ արդարեւ բառեր, յատուկ անուններ անգամ սխալ կը գրեն : Ասիկա շատ ցաւալի կէտ մըն է : Կ'առաջարկենք պատուարժան անդամներուն, մանաւանդ մեծայարգ վարչութեան անդամներուն, թօթափել իրենց վրայէն այս անպատուարեւ անհոգութիւնը որ խոտոր կը համեմատի իւրենց ուշիմութեան հետ :

Պէտք է սորվինք ուղղագրութիւնը, պարզերես գուրս գալու համար մարդկային ընկերութեան, դործի, ասպարէզի և ընկերական հաւաքական շրջանակներու մէջ : Պէտք է աշխատինք գրելու առանց տառարկալի, վասնիւրի գէշ կ'ազդէ ան և յոռի տպաւորութիւն կը թողու գրողին անձին վրայ : Ուղղագրութիւնը ամէն անհատի համար պարտաւորիչ է : Անիկա չի նմանիր ուրիշ գիտութիւններու : Անշուշտ շատ լսած ենք մեր շուրջը սա զովասանքի խօսքերը . «Այս ինչ մարդը շատ լաւ հալադէտ կամ հաշուադէտ է, այն ինչը լաւ նրկարիչ է», և այլն : Բայց երբէք լսած էք բնութիւն թէ «Աս մարդը լաւ ուղղագրութիւն գիտէ» : Ամէն մարդ պարտաւոր չէ հալադէտ կամ օրէնդագէտ ըլլալ, բայց ամէն մարդ պարտաւոր է ուղիղ գրել : ՆՐՈՒԱՆԻՒ

Երեք ժողովականներու կողմանէ ընդհատուիլն են քննութեան յանձնուած 24 կտոր ամբաստանութեանց վրայ, եւեզնեւե նուր կուգան աւելցալ, որով քննութիւնը զեղծուցեալ, չարաւանութեանց և պայտնաւորութեանց թիւը կը սուսաւանայ օրէ օր, այնպէս որ կը վախճաւք քե քննիչ Յանձնաժողովը չի կարենայ այս արի աւարտել իրեն յանձնուած գործը, և խնդիրը մնայ ժողովոյ գալստուան քաջանի :

Այսպէս, յայտնաբերված նոր,

Ա. կամ քե բաւել, 25 էր. — Պարպարեան ժողովականներու գումարին կէս աւելի Ազգ. Հիւանդանոցին և Ազգ. Եւսմանականութեան յանձնարարութեան 550 ոսկիին անխախտալ : Այս մասին Տեղապահին հարցում ուղղուած ըլլալով, պատասխան տուցաւ որ քե սոյն գումարին մէկ մասը քերի մը խմբագրութեան, և միւս մասը Պատրիարքարանի պատկանութեան Միհրան Զուհանեան և Ազգիւ Տ. Ահարոնեան եօթնհինգերուն բաժնուած է :

Բ. կամ 26 էր. — Նոյն ժողովականներէն 20 ոսկի այս կապիւղի Գալիսեան Ուսանողին յանձնուելու համար Տեղապահին յանձնուած ըլլալը և սակայն այս գումարի մասին ո՛չ մէկ արձանագրութիւն գտուիլը :

Գ. կամ 27 էր. — Գաւառներէն բերուած և կառավարութեան կողմանէ Պատրիարքարան յանձնուած արձարեղէն եկեղեցական սպասները սենեակի մը մէջ դրուելով, սենեակին դուռը կը կնկուի Մանախումբի մը կողմանէ, բայց յետոյ այս կնիքը կը քակուի, պահուած քանկարժէք առարկաներուն ցուցակը չը գիտցուի քե ի՞նչ կ'ըլլայ . . . և յետոյ նուր կը կնկուի սենեակը :

Դ. կամ 28 էր. Այեւ սաղիի եկեղեցիին արձարեղէններուն ծախուիլը :

ՔԱՂԱՔ. ԺՈՂՈՎԱՅ Կազմը, Ընդհ. Ժողովոյ Կիրակիի նստին մէջ, պաշտօնի քուէարկութեամբ ամբողջացաւ հետեւեալներով .

Արթիւր Մաղաքեան, Եովհ. Տէրունի, Դէորդ Գալսեղեան, Սարգիս Թուրքեան, Եղուարդ Շիրինեան, Հրանդ Մէրկերեան, Տօր. Էնֆիլէճեան և Յար. Դիմարեան :

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԱՅ ԲՅ. 20 Յունիս իր առաջին նիստը պատգարկով, իր Դիւանը կազմեց հետեւեալ կերպով .

Ա. Ատենապետ Տ. Գաբելյան Կոստ. Խաչատուրեան, Բ. Ատենապետ Տ. Սմբատ Կոստ. Գաղապեան, Ա. Ատենապետ Տ. Արսէն Մ. Վրդ. Վեհուհի, Բ. Ատենապետ Տ. Տաճատ Ա. քան. Փաշայեան :

ՊԱՏՐԻԱՐԻԻ քննարկութիւնը պիտի կատարուի Կիր. օր 26 Յունիս, Մայր եկեղեցւոյ մէջ, ուր պիտի գումարուի Ընդհ. Ժողովը : Թէև քանի մը յայտնի Տեղապահականներ առաջարկած են յատուկ քննարկութիւնը, բայց ժողովին մեծամասնութիւնը մերժած է այս առաջարկը :

ԲՐՕՅ. ԱՔՐԱՀԱՄ Տ. ՅԱՆՈՒՆԵԱՆԻ գործունէութեան յանձնարարութեան փառաւոր հանգէտով մը տոնակցաւ Թոպէզդ Գոյճի մէջ : Այս առթիւ, Ընդհ. Ժողովոյ վերջին նստին մէջ, որուն Ա. Ատենապետն է պատուական Յորէկարը, խանդավառ ցոյցեր եղան, որուն Բրօք. Յակոբեան պատասխանեց խիստ յուզուած ձեւերով : «ՄԵՂՈՒ» ևս ջերմապէս կը հնարհաւորէ յարկեր Բրօքէսէօրը և կը մաղթէ երկար կեանք :

ՏՕՆԱԽՐԱՐՈՒԹԻՒՆ. — Բանկայթի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ տոնախմբութիւնը Կիր. օր տեղի ունեցաւ մեծ հանդիսաւորութեամբ : Պատարագեց և քարոզեց Ամեն. Տ. Եովհ. Արքեպ. Արքարունի : Պատարագէն վերջ, Հոգեւոր Տիրոջ դամբարանին վրայ՝ ամբողջ նշնակցաւ ներուն յիշատակին կատարուած հոգեհանգստեան պաշտօնին նախագահեց Տ. Սարգիս Կոստ. Տ. Սարգսեան : Եւսոյ տեղի ունեցաւ մատակի բախում :

ՊԹՈՒՆԱՆԻ լիակէն Յրանա. լեզուի ուսուցիչ Պ. Յարութիւն Յակոբեան Օթիսիէ տ'Արադէմի Գրանտէ պատուանշանին արժանացած է :

— Սկիւսարի Ներսէս-Նրսիսեան վարժարանի ընթացաւարտներու ի պատիւ, Ուրբաթ օր հաւաքոյ մը տեղի ունեցաւ, ուր Տեղեկութի Տիկին Գրիգորիսեան հրաւիրեալներուն ներկայացուց ընթացաւարտները, որք են . Օրիորդներ՝ Հերմինէ Աղապապեան, Աննի Ասլանեան, Սիրուհի Պարսամեան, Ալիս Պետրոսեան, Նելիկ Քեօպեան, և Պարսեան՝ Սուրեն Գաւառեան, Հանրի Թեղեան և Շապուհ Մանկեան :

— Հայֆայի մէջ Հայերու քիւն ստուարացած ըլլալով, Երուսաղէմայ Տեղեկ ժողովին որոշմամբ՝ եկեղեցիի և դպրոցի վերանորոգելու համար շէնք մը վարձուած է եկեղեցիին կողմէն Ե. Նիկիա : Հոգեւոր Հովիւ կարգուած է Յակոբ Բ. Մովսէս : Առաջին պատարագը մատուցեց Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Մկրտիչ Կոստ. Աղաւունքի :

ԴԱՆՈՒԿ (սարքլըf. jaunisse).

5 կրամ magnésie calcinée

5 « Benzoate de soude.

1 « poudre de rhubarbe.

Աստիճառ 15 քաշե պիտի ըլլան. մէկ առուստ, մէկ ցիլիկ կերակուրէն առաջ, մէկ ալ կէս օրէ վերջ ըլլալու պայմանաւ օրը երեք հատ անուշուր է :

[illegible]

առնելու առկն: Քաջ գիտէր ո՞ր այն կենդանին շատ
չատ քսան սկսում էր արժէք. իրաւօքն որ նոյն պարզեւին
աղթիւ. հօրն արտասանած խօսքերը դին չունէին:
— Ո՛րդիակ իմ — րսեր էր կառքօն աղնուականը,
Պէարնեան զուտ ոճով, ոճ մը սրմէ հանրի Գ. չէր կըր-
ցիր երբէք ազատիլ, — ո՛րդիակ իմ, այս ձին հօրդ
տունը ծնած է շուրջ տասն երեք տարի առաջ, և այն
առնէին ի վեր այն տեղ մնացիր է. ուստի և պարտա-
ւոր ես դայն սիրել: Երբէք մի՛ ծախեր զայն, թո՛ղ որ
նահաբառ և պատուով ծերութիւնէն մեռնի, և եթէ ա-
նոր հետ պատերազմի երթաւ, ժեր սպասաւորի պէս
դայն խնամէ: Արքունիքը — շարունակեց Պ. տ՛Արդան-
եան — եթէ երբէք պատիւ ունենաս այն տեղ երթա-
լու, թէ և այս պատուոյն իրաւունք ունիս քու հօրեայ
աղէութեանն. թեամբք, արժանապէս պահէ աղնուա-
կանի անունդ, զոր քու նախնիք՝ հինգ հարիւր տա-
րիէ աւելի կրեցին արժանապէս թէ՛ յեղի և թէ՛ քու
կիներուդ համար: Քուկիներեղ ըսելով՝ կ'իմանա
ծնողքդ ու բարեկամներդ: Միայն Պ. կարախնային և
թագաւորին առջև հշտ ելիր: Այսօրուան օրս սո՛ւ-
միկ պատանի մը իր արիութեամբը, մտիկ կ'ընէ՞ս,
իւր արիութեամբը միայն կրէայ իր բազկը շինել: Ո՛վ
որ րոպէ մը կը դողդոջայ, թերեւ նոյն րոպէին իսկ
բազկին մատուցած չնորհր ձեռքէ կը հանէ: Նորատի-
կա, և երկու պատճառաւ քաջ պէտք է ըլլաւ. ստաջի-
նը սա է որ կասքօն ևս, երկրորդը սա է որ իմ որդիս
ևս Պարպաւնեւէն մի՛ վախնար և զխաւածներ վրն-
արոյ: Սուր դործածել առի՞կեցուցի՞ քեզ, երկաթէ ծըն-
դեր և պղծվածայն զատուակ մ'ունիս. ամէն սոթիւ մե-
նամարտի է իմ հայրս մ'ունիս: Եկե՛ն հինգն առ

[illegible]

- L -

[illegible]

։ պնդեալով մերակ պիտանշտու վայել

~օհյալ~պոմօք Դ Կտոպա մմպղկ/խոն տոպհնուզն ուլոմի

[illegible]

1551 3 a

Եւ ի յայնչեալսն ի յայնչեալսն ի յայնչեալսն ի յայնչեալսն ի յայնչեալսն
 ի յայնչեալսն ի յայնչեալսն ի յայնչեալսն ի յայնչեալսն ի յայնչեալսն

— 7 —

— 6 —

արժէք ունի և որմէ Պ․ կարտինալն ևս կը վախճայ, ան որ ուրիշ բանէ չվախնար, ինչպէս որ ամէնուն յայտնի է։ Ասկէ զատ՝ Պ․ ամ Դրեվիլ տարին տասը հազա՞ր սկուտ կը շահի, հետեւապէս շատ զօրաւոր իշխան մ'է։ Ան ալ քեզի պէս սկսաւ․ զնա՛ այս նամակով զինքը տես, և անոր վրայ դիր վստահութիւնդ, որպէս զի դու ալ անոր պէս դործես։

Այս ըսելով՝ Պ. տ'Արզանեան հայր իր յառուկ
սուրն անոր մէջքէն կապեց, անոր երկու երեսներէն
գորովագին համալուրեց և իր օրհնութիւնը սուսաւ :

Հայրական սենեակէն դուրս ելնելու ատեն՝ երկտասարդն իր մայրը գտաւ որ իրեն կ'սպասէր նշանաւոր գեղովը, գեղ մը դոր ստէպ գործածելու պէտքը պիտի զգար իր առած խրատներուն վրայ: Աւելի երկար և սրտաչարժ եղան մօրը հետ հրաժեշտի բարեկները քան թէ հօրը հետ. այս ըսել չէ թէ Պ. տ'Արզանեան իր որդին չէր սիրեր, քանի որ իր միածին դուստին էր, այլ անոր համար որ Պ. տ'Արզանեան այր էր, և այր մարդու անվայել կը համարէր այլայլութիւն ցոյց տալ. մինչդեռ տիկին տ'Արզանեան կին էր, և միանգամայն մայր: Ուստի շատ լացաւ, և ներում մեզ ըսել ի զովեստ Պ. տ'Արզանեանի որդւոյն որ, թէև ամէն ճիգ թափեց անսասան մնալու, ինչպէս որ անկէր ապագայ հրացանակրի մը, սակայն բնութիւնը յաղթանակը տարաւ և երիտասարդը շատ արատաւք թափեց և հազիւ կրցաւ ինքզինքը գտնել:

Մի և նոյն օրը պատանին ճամբայ ելաւ՝ հօրենական
 երեք պարզեւներն առնելով՝ որոնք, ինչպէս արդէն ը-
 սինք, տասնը հինգ սկուտ, ձի մը և Պ. տը Դէմվիլի

այտուրուն ուռիլները ցից, — նշան նկնգութեան —
ծնօտին ջիւղերը խիստ զօրեղ, — կասքօն մը ճանչկու
անվրէպ նշան, առանց գտակի կամ նոյն իսկ թաղհա-
րի —, թէև մեր երիտասարդը տեսակ մը փետուրով
զարդարուն գտակ հաղեր էր, աչքը բաց և ուշիմ, քի-
թը կոր՝ այլ նրբագիծ, թէև խիստ մեծ էր պատանիի
մը համար, խիստ փոքր՝ արբուն հասակի համար. իսկ
անվարժ աչք մը այս պատանին տեսնելով պիտի կար-
ծէր թէ ագարակապանի մը ուղեւոր որդին էր, եթէ
կաշի կամարէն կախուած թուր մը չունենար՝ որ իւ-
ազդրները կը զարդարէր երբ հետի էր, և եթէ չըլլա-
ր ձիուէն տնկուած մազերը: Արդարև մեր երիտասա-
րդը ձի մ'ունէր, որ ամէնուն ուշադրութիւնը կը գո-
րաւէր. Պէտքն ի երիվարիկ մ'էր, տասն երկու կամ
տասնը չորս տարեկան. դեղնագոյն պոչն անմաղ էր,
թէև սրունդներն իրենց այտումն ունէին, և թէև
գլուխը ծունկերէն վար կախած կը քալէր, որով զլիսի
փոկի պէտք չկար, դարձեալ օրն ութ մղոն կ'անէր՝
Դժբաղդաբար այս ձիուն յատկութիւններն իր այլան-
դակ կաշիին և անշահ դնացքին պատճառաւ՝ անտես-
մնալով, այնպիսի ատեն մ'որ ամէն մարդ ձիէ կը հաս-
կընար, անոր երեւուածը Մէօն աւանին մէջ՝ ուր գրեթէ
քառորդ մ'առաջ մտեր էր Պօթանիսի դռնէն, մեծ տա-
րածայնութիւն հանց և ձիաւորին անուան ևս արատ
բերաւ:

Եւ այս տարածայնութիւնն շատ ծանր եկեր էր նորաւոր տ'Արդանեանին (այսպէս կը կոչուէր այս երկրորդ Ռօսիանաւոր տօն Քիշօղը), որ՝ իբր քաջ ձիււոր՝ իր ձիուն ծաղրելի կողմը կը ճանչնար. ուստի՝ քանիցս հառաչեր էր իբր պարպե մ'իւր հօրը ձեռքէն:

ԱԶԽԱՐՅԻ ՇՈՒՐՋԸ

ԻՄԱՆԵԼԱՆԻ ՄԷՋ ԵՐԾԱՏԱԿԱՐԱՆ ՄԸ .

— Խիստ բարձր բուրդ մ'է այս, որուն բացումը տեղի ունեցաւ վերջերս Կիւզէմ լիւզիին մէջ (Խաղաղական Ուղիւնոս), ի յիշատակ աշխարհի առաջին շրջանին զոր քաւ Սպանիացի դիւղացին նաւարկուն 1519—1521 թուականներուն :

Յիշատակարանը կանգնուեցաւ՝ կղզիին բնիկներուն մէջ կատարուած հանդանաւութիւնով մը :

* * *

ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՆՈՐ ՄԱՅՐԱՖԱՂԱՔԸ .

— Աւստրալիոյ Խորհրդարանը մօտեցաւ պիտի թողու Մէլբուրնը և պիտի երթայ հաստատուել ի Քանպէրրա, հիմնուած քիչ մը աւելի հիւսիս, Կապոյտ Լերանց անդին կողմը :

Քանպէրրա բոլորովին նոր քաղաք մ'է, որուն շինութեան ձեռնարկուեցաւ հազիւ վեց տարի առաջ, 1921 ին, հիմա ունի միայն 5000 բնակիչ : Շինուած է քաղաքակրթութեան իսկական կանոններուն համաձայն : Կեդրոնին մէջ հաստատու-

ուած են գործատեղիները : Շուրջանակի կառուցուած են տուները, միայնակ շնորհայի ձեւերով և պարտէզներով շրջապատուած :

* *

ԴԻՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԿԱՊԱՐԻԿՆԵՐԸ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Յայտնի է թէ հին նաւարկուներու յուշկապարիկները (sketches և ձևեր)՝ միայն իրենց երեւակայութեան պատուր չեն, այլ պարզ իրականութիւն մ'ալ կը մտնէ տեսողութեան մէջ :

Իսկապէս, Ի՞նչ յուշկապարիկ : Ջրային ստանաւոր մը որ կը կոչուի Տիւլօն կամ Լաւանդէն : Տաք ծովերու մէջ կ'ապրի, զլիսաւորաբար Կարմիր ծովուն և Չինաց ծովուն մէջ : Կիւտազլի մ'է . որուն էգն ունի զարդացած ծիծեր : Իր լողարանները վերին անդամներու պատրանքը կուտան : Այս է որ, մշտնջերու դիւթութիւնն և Կերպարգոսուած և Եւակայութիւնն ալ օգնութեան հասնելով, տեղի տուած է աւանդութեանը յուշկապարիկներու, որոնք իրենց իրանը ջուրէն դուրս բռնելով, կարծեցնել տուած են թէ իրենց բազուները դէպ ի ճամբորդները կը կարկանդակեն :



ԺԱՄԱՆՑԻ ԲԱԺԻՆԸ

Մարդուն մէկը յարկաբաժիններ պարունակող շէնքի մը բաց դռնէն ներս կը մտնէ և դռնապանին կ'ըսէ .

— Բարի լոյս, պարոն դռնապան :

— Բարի լոյս, կը պատասխանէ քաղաքավարութեամբ դռնապանը :

— Այս օր ի՞նչպէս էք :

— Աղէկ եմ, շնորհակալ եմ :

— Տիկինը ի՞նչպէս է :

— Աղէկ է :

— Զաւա՞կդ :

— Զաւակ չունիմ :

— Պարոն շունդ ի՞նչպէս է :

— Շուն չունիմ : Բայց կրնա՞մ հարցնել պարոնին թէ ի՞նչ ծառայութիւն կրնամ մատուցանել իրեն :

— Բացարձակապէս ոչինչ : Որովհետեւ դրանք վրայ « Դռնապանի խօսեցիք » կարգացի, ներս մտայ և խօսեցայ :



— 14 —

գեղեցիկ օր է : Լեռներն ու դաշտերը կանաչ փոքոցով ծածկուած են կարծես : Բայց այն զարհուրելի փոթորկալից գիշերէն յետոյ, երբ մենք ի դուր կը վնասուինք եղբայրս, բնութիւնը բոլորովին փոխուեցաւ ինձ համար : Երկինք բարկացած են ինձ և այլ եւս գեղեցիկ չեն երևիր ինձ :

Արեւը, որուն ոսկեգոյն ճառագայթները առաջ կը զմայլեցնէին զիս, հիմա դողդոջուն և տխուր ճառագայթներ միայն կը հասցնէ ինձ՝ եղեւինի շիւղերուն մէջէն . լուսնի պէս կ'երեւի ինձ հիմա անիկայ : Անտառին մէջ հովին ձայնը վախէկապէս ինձ : Տերեւներու շուրջը կը սարսափեցնէ ինձ : Ա՛յ, ի՞նչ չարչարանք է ազդու խիղճը : Այս տեսակ խիղճը ուրիշ բան չէ, բայց եթէ դժոխք սրտի մէջ : Ա՛հ, կը բազմայի երկրի վրայ բնակող բոլոր մարդերուն պոռալ բարձրաձայն, պոռալ այնպիսի ձայնով մը ուրկէ դողային ապառաժներն ու լեռները, և ըսել . « Մարդի՛կ, մարդի՛կ, դողա՜ցէ՛ք յանցանք դործելէ : Զարիք դործելու գաղափարն իսկ հեռացուցէք ձեր մըտքէն » : (Տախտակէ նստաւանին վրայ կը նստի, ձեռքերը ծունկերուն վրայ կը դնէ եւ երկիւմ կը նայի) : Եղբայր, սիրելի եղբայր, անուշիկ Վահրամս, ես զքեզ հոս ձգեցի վատութեամբ : Հիմա՛ ո՞ր ես արդեօք . վերը՝ երկինքն ե՞ս թէ՛ տա-

— 15 —

կաւին կ'ապրիս երկրի վրայ : Կարելի է որ դադաններ կերան դանիկա այստեղ, կամ թէ աւազակները տարին և իրենց դարչելի խումբին հետ միացուցին : Ո՛հ, աւելի աղէկ էր որ ես փճանայի, աւելի աղէկ էր որ ես մեռնէի, քան թէ այսպէս մեղաւոր և խղճահար ապրէի : Այո՛, այո՛, աւելի աղէկ է որ մեռնի՛մ : (Ոսփի կ'ելնէ եւ կը նայի այն կողմն ուր Աւոս քաղաքն է) : Աստուած իմ, ի՞նչ կը տեսնեմ : Ո՛վ երկինք, օգնէ ինձ որ խելքս չկորսնցնեմ : Արդեօք յանցաւոր միտքս չէ՞ որ բանականութիւնս կը խանգարէ . . . կամ արդեօք եղբորս ստուգելը կը հալածէ զիս . . . ո՛չ, ո՛չ, անիկայ չէ, երեւակաւ յուշիւնս կը խաբէ զիս : Զէ՛, անիկայ չէ, (Աչքերը կը սրբէ եւ Աւոսին կը նայի) : Զէ՛, տեսիլք չէ, անշուշտ իր ճամբան կորսնցուցած տղայ մըն է . իր ծնողքին պէտք է տանիմ : (Մօտենալով) : Սիրուն տղա՛յ, որչա՛փ ալ կը նմանի եղբորս : Նոյն գիմալծութիւնը, նոյն սեւ մազերը և նոյն կարմիր այտերը : Զեմ համարձակիր հետը խօսիլ, բայց նա երազին մէջ կը ժպտի ահա : Արթընցնեմ : Հողի՛ս, աղու՛րս, արթնցի՛ր, ե՛լ :

ԱՇՈՏ (բունին մէջ) . Ի՞նչ կայ, ինչո՞ւ ելնեմ . թողուցէ՛ք՝ քիչ մըն ալ քնանամ :

ԱՂՔԱՍ . — Մի՛ բարկանար, տղա՛ս : Անուշըդ ի՞նչ է :

« ՀԱՅՆՈՅԱԳԻՐ » Ը

Կը յիշուի թէ Պարզեւ Էֆ. Փափաղեան Հայնոյագիր անուանած էր Տեղապահին դէմ Ընդհ. Ժողովին տրուած և 24 յօդուածներէ բաղկացած ծանուցիչն ամբաստանողիւրը: Ամբաստանութեանց հեղինակները բողոքած էին այս որակումին դէմ: Ընդհ. Ժողովոյ վերջին նստին բաղումէն առաջ, Դիւանը կ'առաջարկէ որ Պարզեւ Էֆ. իր խօսքը, և բողոքողներն ալ իրենց բողոքը ետ առնեն: Ըստ այսմ, Պարզեւ Էֆ. ետ կ'առնէ իր արտասանած այդ անպառաճ բառն, ինքնարգարացման համար ըսելով թէ, այդ բառն իր բերնէն փախած էր ջղապրօն նստացի մը մէջ: Այս խոստովանութիւնն ալ սակայն, բաւ մեզ, իր դատաւարտութիւնն է, վասն զի ներքին մարդը կը մատնանէ: Ի՞նչ կար ջղագրգուելու: Տեղապահը կ'ամբաստանուի ծանրակշիռ իրողութիւններու համար. իրեն ի՞նչ որ կը ջղագրգուի եւ ինքզինքէն այն աստիճան կ'ենէ, որ ամբաստանագիրը հայնոյագիր կ'անուանէ ու բողոքներու տեղի կուտայ: Բայց ի՞նչ և իցէ. մենք այսուհանդերձ զո՞նք ենք որ խնդրը կը փակուի այս յետս կոչումով: Կը բաւէ որ ներքին մարդը հասկցուեցաւ այս առթիւ:

Ժառանգորդի մէջ սոյն յետս կոչումը կարգաւորվ այս տողերը զբաւ էինք արդէն, երբ Ազգայնոցի մէջ կարգացինք թէ Պարզեւ Էֆ. կը հերքէ իր արտասանած հայնոյագիր բառը յետս կոչած ըլլալը: Ուրեմն անդամ մ'եւս կը կրկնէ և կը պնդէ թէ Տեղապահն իր զործած ապօրինաւորութիւններուն համար ամբաստանելը հայնոյելու հաւասար կը նկատէ. այնքան անարատ և սրբութիւն սրբոց կը նկատէ նորին Ամենապատուութիւնը: Այդին համար սրտէ շահ մ'է իր բարեկամները ծանցնալը, և Պարզեւ Էֆէնի մեքստանալը գրին առիթով հանրութիւնն ծանցցուց ինքզինք և իր հոգին: Այս կը բաւէ:

ՅԱԻՌԻ կը ծանուցանենք մահը Լօյտ Թրիէսթինային նախկին կարեւորագոյն պաշտօնեայ Տիար ԷՏՈՒԱՐԴ ԳԱՐԱԳՈՇԵԱՆԻ: Յուզարկաւորութիւնը տեղի ունեցաւ Երէկ Ֆէրիզիւղի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան բնակիչ բազմութեան մը: Մեք ցատկեղութիւնը կը յայտնենք այրիացեալ Տիկին Աղնիւի և պարագայից:

Ֆէրիզիւղի եկեղեցւոյ մէջ վաղը պիտի պատարագէ Գարակեօղեան Որբանոցի խոստովանահայրը՝ Տ. Զոհն Քահ.:

Չարխուկեան, իր քանոնագործութեան չորրորդ տարեմուտին առթիւ: Երգեցողութիւնը տեղի պիտի ունենան Որբանոցի Երգչախումբին կողմանէ:

ՏԻԱՐ ՀՐԱՆԴ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԵՒ

ՕՐԻՈՐԴ ՍԱՔԵՆԻԿ ՅՈՎՍԱՍԵԱՆ

ԽՕՍԵՅՍԱՆԻՔ

Բօնաքանցաւ

Պուրէտ

ՇԱԲԹՈՒԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ

ՅՈՒՆԻՍ 23—29

- 23 ԵՇ. Սրբ. Իսի. Սահակայ Է. Յովսէփայ Է. վկ. Սարգսի Է. Բագոսի:
24 Ուր. Պահի:
25 Շր. Սրբ. Մեծիկ Ներսէսի Է. Խաղայ եպիսկոպոս:
26 ԽԿիր. Բարեկղ. Լուս. պահոց: Հրտ:
27 ԲՇ. Եպիսկոպոս Կիսրայի Է. Բաբել հայրապետ:
28 ԳՇ. Ս. Կոստանդիանոսի Է. Հեղինեայ: Յն. Լուսնի. Ժ. 22, բ. 58:
29 ԳՇ. Պահի: Աւար. Մուհարրեմ Է. Տարեմուս. 1345:

ՏՊԱԳՐ. Յ Գ. ՓԱՆԳԱՇԵԱՆ

— 16 —

ԱՇՈՏ. — Ամէն մարդ գիտէ որ որ անուանաւ Աշոտ է:

Ա.Ղ.ՔԱՏ (զարմացած). Տէր Աստուած, ուժ տուր ինձ:

ԱՇՈՏ (կ'ելլէ եւ ապաւնւում անոր կը նայի). — Դուն ո՞վ ես:

Ա.Ղ.ՔԱՏ. Ո՛հ, ես շատ դժբաղդ եմ, մարդոց մէջ ամէնէն դժբաղդը:

ԱՇՈՏ. — Կը գիտամ վրադ, խեղճ մարդ. անօթի չե՞ս արդեօք: Կարծեմ գրպանիս մէջ կտոր մը հաց պիտի ունենամ. . . : Ո՛հ, արդէն կերեր եմ:

Ա.Ղ.ՔԱՏ. — Դուն շատ բարի ես, սիրուն տղա՛ս. իմ կորստած եղբայրս ալ այդպէս էր. . . Ափսո՛ս:

ԱՇՈՏ (Աղբաքինի տղայ). — Ա՛ն այս ելակը:

Ա.Ղ.ՔԱՏ (Սարսափելով եւ կը փախչի). — Ելակ. . . պղտիկ, քեզ ո՞վ սովորեցուց ելակ տալ ինձ. միթէ միւս աշխարհէն եկած ես դուն: Այո՛, դու եղբայրս ես: Դազանները կերած էին քեզի, և հիմա քու հոգին է որ կ'երեւայ ինձ: Վերցուր այս ելակները. ասոնց ամէն մէկը իմ յանցանքս կը յիշեցնէ ինձ. (նուաղելով գետնի կ'իյնայ):

ԱՇՈՏ. (վախնալով, կողովը կը ձգէ, կը

— 13 —

կայ: (Աւտիկն կը մօտենայ) Ի՞նչ սիրուն տղայ է: Կարմիր է և սպիտակ, ելակի թուփերուն վրայի պտուղներուն և ծաղիկներուն պէս: Բայց կամայ, պէտք է՞ արթնցնել: Բարի և անուշիկ տղայ մը կ'երեւի: Ի՞նչպէս հանդարտ կը քնանայ. . . : Բայց ահա՛ կուգայ խեղճ աղքատ Յանկոյը. . . : Դժբա՛ղդ մարդ, կը ցաւիմ վրան եւ կը վախնամ ալ, երբ անտառին մէջ մինակ աւնոր պատահիմ. միշտ մտածմունքի մէջ է ան և տխուր: Մարդ չէ տեսած անոր խնդալը: Իր ծանր բեռին տակ ի՞նչպէս ծռած է: (Կը հեռանայ երգելով):

ՏԵՍԻԼ Ե.

Ա.Ղ.ՔԱՏ (Առանձին. շատ խեղճ, բայց մաքուր և հագուստը. փայտի խուրճը վար կը դնէ):

— Միշտ հոս կուգամ նորէն. կարծեմ թէ վերջապէս հոս պիտի գտնեմ եղբայրս, զոր 30 տարի է չեմ տեսած: Ի դուր կ'ուզեմ համոզուիլ թէ փնտռողն պարագայ է, բայց զարձեալ կը շարունակեմ և չեմ վհատիր: Խիղճս հանգիստ չ'ընդունար գիտ. միշտ կը ստիպէ զիս որ փնտռեմ եղբայրս, ուրկէ բաժնուած եմ իմ վատ արարքէս ի վեր: (Բոլորսիքը նայելով): Այս ի՞նչ